ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» սեպտեմբերի 2025 թ. N 144-Ա

ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ, ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 1-ին մասի 29-րդ կետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) քաղաքաշինության բնագավառում էթիկայի հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) քաղաքաշինության բնագավառում էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի.

3) քաղաքաշինության բնագավառում էթիկայի հանձնաժողովի անդամների ընտրության և գործերի քննության կարգերը՝ համաձայն հավելված N 3-ի.

4) շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը՝ համաձայն հավելված N 4-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

9/22/2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2025 թվականի սեպտեմբերի 22 -ի N 144-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի	Ա.Ա.Հ	Պաշտոնը
նախագահ՝	Դավիթ Համլետի Գրիգորյան	Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացուցիչ
անդամներ՝	Էլեկտրոնային ծրագրի միջոցով պատահականության սկզբունքով ընտրվում է քաղաքաշինության բնագավառի մասնագետների գրանցամատյանում գրանցված համապատասխան գործունեության տեսակի հավաստագիր ունեցող մասնագետ	Քաղաքաշինության բնագավառի մասնագետների գրանցամատյանում գրանցված համապատասխան գործունեության տեսակի հավաստագիր ունեցող մասնագետ
	Նշան Եփրեմի Մարտիրոսյան	Քաղաքաշինության բնագավառում գիտական աստիճան ունեցող գիտնական
	Սարգիս Հրաչիկի Հայրոյան	Քաղաքաշինության բնագավառում գիտական աստիճան ունեցող գիտնական
	Վրեժ Սերյոժայի Թամազյան	Քաղաքաշինության բնագավառում գիտական աստիճան ունեցող գիտնական

	Գևորգ Աշոտի Գևորգյան	Քաղաքաշինության բնագավառում գիտական աստիճան ունեցող գիտնական
	Սլավա Սարգսի Սարգսյան	Իրավաբան
	Կարեն Հրայրի Խտրյան	Իրավաբան
	Արմեն Լևոնի Ասատրյան	Իրավաբան
	Կարապետ Արթուրի Կոգարով	Պատասխանատու մասնագետների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպության ներկայացուցիչ
	Ռուբեն Ռուբենի Մալումյան	Պատասխանատու մասնագետների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպության ներկայացուցիչ
	Հայկ Ալբերտի Իգիթյան	Պատասխանատու մասնագետների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպության ներկայացուցիչ
	Բորիս Մոնիստի Քոչարյան	Պատասխանատու մասնագետների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպության ներկայացուցիչ
	Արթուր Վլադիմիրի Զապրոսյան	Պատասխանատու մասնագետների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպության ներկայացուցիչ
	Լիդա Ռազմիկի Արամյան	Հոգեբան
	Լոքյան Արսեն Բաղդասարի	Հոգեբան

	Հակոբ Վանիկի Թադևոսյան	Հոգեբան
քարտուղար՝	Աննա Գարեգինի Պետրոսյան	Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացուցիչ

Հավելված N 2
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2025 թվականի մայիսի 22 -ի N 144-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են քաղաքաշինության բնագավառում պատասխանատու մասնագետի ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ պատասխանատվության, արհեստավարժության, մասնագիտական կատարելագործման, հանրության, գործընկերների և այլոց իրավունքների և օրինական շահերի ճանաչման վերաբերյալ հարաբերությունները:

2. Քաղաքաշինության բնագավառում մասնագետների էթիկայի հանձնաժողովն (այսուհետ՝ հանձնաժողով) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքաշինության մասին», օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

2. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից էթիկայի կանոնների խախտումները քննարկելու նպատակով ստեղծում է հասարակական հիմունքներով գործող էթիկայի հանձնաժողով և նույն հրամանով նշանակվում է էթիկայի հանձնաժողովի նախագահ և քարտուղար:

4. Հանձնաժողովի գործունեությունը կազմակերպվում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության:

6. Հանձնաժողովի նիստերի օրակարգի նախագիծը ձևավորվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից:

7. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում հանձնաժողովի նիստին մասնակից անդամների քվեարկության արդյունքում ընտրված անդամը:

8. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է Հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված հօգուտ պատասխանատու մասնագետի:

9. Հանձնաժողովում հարցերի քննարկման արդյունքներով կազմվում է արձանագրություն, որում նշվում է՝

ա) հանձնաժողովի նիստի անցկացման ամսաթիվը և տեղը,

բ) հանձնաժողովի կազմը,

գ) քննարկվող հարցի բովանդակությունը,

դ) քննարկմանը մասնակցող անձանց մասին տեղեկությունները,

ե) հանձնաժողովի եզրակացության բովանդակությունը,

զ) տեղեկություններ՝ ընդունված որոշման կամ եզրակացության հրապարակման մասին:

10. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները կազմվում է թղթային:

11. Հանձնաժողովը ընդունած որոշման մասին մեկ օրվա ընթացքում կապի միջոցներով տեղեկացնում է ծառայողական քննության կողմերին:

12. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

2) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը.

3) կազմում է հանձնաժողովի նիստի օրակարգը, որոշում նիստի անցկացման ժամանակը և վայրը.

4) ստորագրում է հանձնաժողովի անունից կազմվող գրությունները.

5) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

13. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը.

2) նիստի անցկացման օրը կամ մեկ օր առաջ հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրակարգի, ժամանակի և վայրի մասին՝ էլեկտրոնային փոստի միջոցով.

3) հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում գործերի նախնական ուսումնասիրության արդյունքները և յուրաքանչյուր գործի վերաբերյալ եզրակացությունները.

4) արձանագրում է հանձնաժողովի նիստերը և ստորագրում այն.

5) կատարում է հանձնաժողովի նախագահի հանձնարարականները.

6) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

14. Հանձնաժողովի անդամները՝

1) մասնակցում են հանձնաժողովի նիստերին, կարող են ներկայացնել հարցադրումներ և քվեարկել.

2) հանձնաժողովի նիստերին հարգելի պատճառով չմասնակցելու դեպքում նախապես տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին.

3) հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարեցման դեպքերի վերաբերյալ հանձնաժողովի նախագահն առաջարկություն է ներկայացնում Կոմիտեի նախագահին հանձնաժողովի անդամին փոխարինելու համար:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

15. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են՝

1) նրա լիազորությունների ժամկետն ավարտվելու դեպքում.

2) անձնական դիմումի հիման վրա.

3) նրա մահվան դեպքում:

16. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1)էթիկայի կանոնները խախտելու դեպքում.

2)օրենքով և հանձնաժողովի աշխատակարգով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում:

3)շահերի բախման առկայության վերաբերյալ չհայտարարագրված տվյալներ հայտնի դառնալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում

17. Հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են նրա՝ հանձնաժողովի նախագահի պաշտոնից հրաժարական ներկայացնելու դեպքում:

18. Հանձնաժողովի նախագահի կողմից իր պարտականությունները չկատարելը հիմք է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդի կողմից Կոմիտեի նախագահին առաջարկություն ներկայացնելու հանձնաժողովի նախագահին փոխարինելու համար:

19. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված N 3
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2025 թվականի մայիսի 22 -ի N 144-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐԸ

1. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Քաղաքաշինության բնագավառում էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) կազմված է հանձնաժողովի նախագահից, քարտուղարից և հանձնաժողովի 5 անդամից, որոնց լիազորությունների ժամկետը հինգ տարի է: Յուրաքանչյուր դեպքի համար ձևավորվում է պատասխանատու մասնագետի էթիկայի առանձին հանձնաժողով: Նույն անձը չի կարող երկու անգամից ավելի անընդմեջ ընտրվել էթիկայի հանձնաժողովի անդամ:

2. Հանձնաժողովի անդամներն են.

1) Քաղաքաշինության բնագավառի մասնագետների գրանցամատյանում գրանցված համապատասխան գործունեության տեսակի հավաստագիր ունեցող մեկ մասնագետ,

2) Պատասխանատու մասնագետների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպության մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ),

3) Քաղաքաշինության բնագավառում գիտական աստիճան ունեցող մեկ գիտնական (համաձայնությամբ):

4) Բարձրագույն ուսումնական հաստատությունից (ԲՈՒՀ) մեկ հոգեբան (համաձայնությամբ),

5) Բարձրագույն ուսումնական հաստատությունից (ԲՈՒՀ) մեկ իրավաբան (համաձայնությամբ),

3. Հանձնաժողովի անդամ կարող է լինել այն անձը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով, ունի քաղաքաշինության բնագավառում գիտական աստիճան կամ մասնագիտական աշխատանքային առնվազն երեք տարվա փորձառություն և ընդգրկված է էթիկայի հանձնաժողովի կազմում:

4. Հանձնաժողովի անդամների թեկնածուներն առաջադրվում են էթիկայի հանձնաժողովի կազմից պատահականության սկզբունքով:

5. ԲՈՒՀ-երից և հասարակական կազմակերպություններից ստացված թեկնածուներից Կոմիտեի նախագահը հանձնաժողովի կազմում ընդգրկում է երեք թեքնածու, որի ընթացքում հաշվի է առնվում թեկնածուի գիտական աստիճանը, կամ կոչումը, կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելը, առնչությունը գիտելիքների ստուգման կամ կրթական գործընթացներին, ինչպես նաև ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

6. Հանձնաժողովը ստեղծվում է Կոմիտեի նախագահի հրամանով: Հանձնաժողովի կազմը հաստատում է Կոմիտեի նախագահը՝ հինգ տարի ժամկետով:

2. ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

7. Հանձնաժողովը օրակարգում ընդգրկված հարցերը քննում է օրինականության, կողմերի իրավահավասարության, համաչափության սկզբունքների հիման վրա՝ ապահովելով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը:

8. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ Կոմիտեի նախագահի կողմից հանձնաժողովի կազմը հաստատելուց հետո, բայց ոչ ուշ քան հանձնաժողովի առաջին նիստի օրը շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկացված լինելու մասին ներկայացնում են հայտարարագիր՝ համաձայն հավելված 3-ի:

9. Հանձնաժողովի անդամները պարտավոր են պահպանել քննության ընթացքում իրենց հայտնի դարձած օրենքով գաղտնի համարվող տեղեկությունները: Հանձնաժողովի անդամները պարտավոր են պահպանել նաև քննության ընթացքում իրենց հայտնի դարձած այլ տեղեկությունների, ինչպես նաև փաստաթղթերի բովանդակության գաղտնիությունը՝ մինչև համապատասխան որոշման հրապարակումը:

10. Օրակարգում ընդգրկված հարցերը քննվում են ներկայացված տեղեկատվության և կից փաստաթղթերի հիման վրա:

11. Անհրաժեշտ փաստաթղթերը լիազոր մարմին են ներկայացվում առձեռն կամ փոստով:

12. Էթիկայի հանձնաժողովում քննվում են պատասխանատու մասնագետի էթիկայի՝ քրեական կամ վարչական պատասխանատվություն չնախատեսող կանոնների խախտումները:

13. Հայտերի քննության արդյունքում Հանձնաժողովը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) քրեական կամ վարչական պատասխանատվություն նախատեսող առերևույթ արարքներ հայտնաբերվելու դեպքում կամ մասնագիտական էթիկայի կանոնների խախտման բացակայության հիմքով՝

ա. մերժել դիմումը,

բ. դադարեցնել գործի քննությունը՝ սեփական նախաձեռնությամբ գործի քննությունն սկսելու դեպքերում.

2) օրենքով քրեական կամ վարչական պատասխանատվություն չնախատեսող մասնագիտական էթիկայի կանոնների խախտման հաստատման դեպքում մեկօրյա ժամկետում՝

ա. լիցենզավորող մարմին ներկայացնել առաջարկություն՝ մեկ տարվա ընթացքում առաջին անգամ խախտում կատարած պատասխանատու մասնագետին նկատողություն տալու վերաբերյալ տեղեկությունը հավաստագրված մասնագետների գրանցամատյանում գրանցելու համար,

բ. մեկ տարվա ընթացքում պատասխանատու մասնագետի կողմից էթիկայի կանոնների կրկնակի խախտում արձանագրվելու դեպքում լիցենզավորող մարմին ներկայացնել առաջարկություն՝ պատասխանատու մասնագետին խիստ նկատողություն տալու վերաբերյալ տեղեկությունը հավաստագրված մասնագետների գրանցամատյանում գրանցելու համար,

գ. մեկ տարվա ընթացքում երրորդ անգամ պատասխանատու մասնագետի կողմից էթիկայի կանոնների խախտման դեպքում լիցենզավորող մարմին ներկայացնել առաջարկություն՝ մեկ ամիս ժամկետով կասեցնելու պատասխանատու մասնագետի հավաստագիրը՝ հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 11.8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը:

14. Հանձնաժողովի նիստի արձանագրության հիման վրա համապատասխան ստորաբաժանման կողմից կազմվում է Կոմիտեի նախագահի որոշման նախագիծը և սահմանված կարգով ներկայացվում է հաստատման:

Հավելված N 4
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2025 թվականի սեպտեմբերի 22 **-ի N** 144-Ա **հրամանի**

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ էթիկայի հանձնաժողովի անդամ _____
Անուն, ազգանուն

սույնով պարտավորվում եմ, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի կողմից ընդունված որոշման հիմքով էթիկայի հանձնաժողովի գործընթացի շրջանակներում իմ և հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված պատասխանատու մասնագետի՝ հասարակության կամ շրջակա միջավայրի կամ համայնքի կամ պետական մարմնի կամ գործընկերոջ կամ պատվիրատուի շահերից գործելու պարտականությունը վտանգվում է կամ կարող է վտանգվել կամ որևէ այլ կերպ ներազդեցություն ունենալ՝ ելնելով մասնագետի, նրան փոխկապակցված անձանց և երրորդ անձանց միջև առկա մասնավոր հարաբերությունների բախման առկայության՝ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր, տատ, պապ, թոռ) կապված լինելու դեպքում հայտարարել և նկարագրել այն, ինչպես նաև շահերի բախմանը առնչվող այլ հանգամանքները:

Առկա է ☐

Առկա չէ ☐

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

_____ ____ _____ 20 թ.

(Հայտարարագիր ներկայացնողի անունը, ազգանունը, ստորագրությունը)